ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 08/2025-Ա/Վ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 3 նոյեմբերի 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական Կարեն Բենիամինի Սարգսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 4-ին հարուցված թիվ 08/2025-Ա/Վ վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑ

1. Նախապատմություն

1. Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման պլանով հաստատված միջոցառումների հիման վրա իրականացված ուսումնասիրության, այդ թվում՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական Կարեն Սարգսյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզել է հետևյալը.

1.1 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքէջի հրապարակված տվյալների համաձայն՝ Կարեն Սարգսյանը 2021 թվականի ապրիլի 28-ից զբաղեցնում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդականի հայեցողական պաշտոնը (https://mtad.am/pages/staff/31):

1.2 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն՝ Կարեն Սարգսյանը 2008 թվականի հունիսի 3-ից մինչև 2024 թվականի փետրվարի 28-ը հանդիսացել է «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերության մասնակից՝ ընկերության բաժնեմասի 33.4 տոկոսի չափով:

1.3 Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և ծախսերի 2024 թվականի տարեկան հայտարարագրի «Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում Կարեն Սարգսյանը հայտարարագրել է իր՝ 2004 թվականի հունիսի 11-ին ձեռքբերված բաժնեմասը «ԷԼ ԿԱՍ» ՍՊԸ-ում (34%) և ընկերությունից 2024 թվականին ստացված շահաբաժինը՝ 9,421,308 դրամի չափով: «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը Կարեն Սարգսյանը հայտարարագրել է նաև իր՝ 2021, 2022, 2023 թվականների տարեկան հայտարարագրերում:

1.4 Ըստ Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) տեղեկատվական շտեմարանի ևս՝ Կարեն Սարգսյանը «ԷԼ ԿԱՍ» ՍՊԸ-ից ստացել է շահաբաժին: 2024 թվականի ընթացքում այն կազմել է 9,421,308 դրամ: Նույն շտեմարանի տվյալների համաձայն՝ 2022 թվականին Կարեն Սարգսյանի՝ «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերությունից ստացված շահաբաժինը կազմել է 1,730,979 դրամ: 2021 և 2023 թվականներին «ԷԼ ԿԱՍ» ՍՊԸ-ից ստացված շահաբաժիններ առկա չեն:

1.5 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն՝ 2006 թվականի օգոստոսի 23-ից մինչև օրս Կարեն Սարգսյանն ունի 10% մասնակցություն «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունում և հանդիսանում է իրական շահառուն:

1.6 Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և ծախսերի 2024 թվականի տարեկան հայտարարագրի «Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում Կարեն Սարգսյանը հայտարարագրել է իր՝ 2006 թվականի օգոստոսի 23-ին ձեռքբերված մասնաբաժինը «Հայռուսկոգեներացիա» ՍՊԸ-ում (10%): Ընկերությունից ստացված

շահաբաժին առկա չէ: Նույն տեղեկատվությունը Կարեն Սարգսյանը հայտարարագրել է նաև իր՝ 2021, 2022, 2023 թվականների տարեկան հայտարարագրերում:

1.7 Ըստ ՊԵԿ տեղեկատվական շտեմարանի ևս՝ Կարեն Սարգսյանը «Հայռուսկոգեներացիա» ՍՊԸ-ից շահաբաժին չի ստացել:

ՊԵԿ հարկ վճարողների փնտրման համակարգի համաձայն՝ «Հայռուսկոգեներացիա» ՍՊ ընկերությունը գործող է:

1.8 Սույն թվականի հունիսի 16-ին Հանձնաժողովը թիվ 01/2462-2025 գրությամբ հարցում է ուղարկել պաշտոնատար անձին՝ առևտրային կազմակերպություններում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ:

Նշված գրությանն ի պատասխան՝ հունիսի 19-ին Կարեն Սարգսյանից ստացվել է պատասխան գրություն:

Հանձնաժողով է ներկայացվել «ԷԼ ԿԱՍ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցությունը՝ **5 տարի ժամկետով՝ 2021 թվականի սեպտեմբերի 25-ից հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ պայմանագիրը**:

Միաժամանակ վերոնշված գրությամբ Կարեն Սարգսյանը Հանձնաժողովին հայտնել է, որ «Հայռուսկոգեներացիա» ՍՊԸ-ում իր ունեցած բաժնեմասը չի հանձնել հավատարմագրային կառավարման՝ հաշվի առնելով, որ ընկերությունը «երկար ժամանակ գտնվել է դադարի մեջ (մինչ օրս) և չի իրականացրել ձեռնարկատիրական որևէ գործունեություն:

1.9 «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի՝ 2021 թվականի ապրիլի 28-ից մինչև 2025 թվականի հունիսի 20-ը իրացման շրջանառության առկայության վերաբերյալ 2025 թվականի հունիսի 20-ին Հանձնաժողովը թիվ 1/2534-2025 գրությամբ հարցում է ուղարկել ՊԵԿ:

ՊԵԿ-ից ստացվել է պատասխան առ այն, որ «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ն 2021-2025 թթ. ունեցել է իրացման շրջանառություն:

2. 2025 թվականի օգոստոսի 4-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 08/2025-Ա/Վ որոշումը՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական Կարեն Սարգսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

3. 2025 թվականի օգոստոսի 5-ին թիվ 01/3130-2025 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվել է Կարեն Սարգսյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Փոստային առաքանին Կարեն Սարգսյանը ստացել է 2025 թվականի սեպտեմբերի 3-ին:

4. 2025 թվականի օգոստոսի 12-ին Կարեն Սարգսյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել դիրքորոշում և «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանք:

5. Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 22-ին կատարվել է հարցում Պետական եկամուտների կոմիտե: Բացի այդ, 2025 թվականի հոկտեմբերի 30-ին Հանձնաժողովը թիվ 01/4224-2025 գրությամբ հարցում է ուղարկել «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերություն՝ ընկերության իրացման շրջանառության ձևավորման վերաբերյալ, մասնավորապես՝ 2021 թվականի ապրիլ ամսվանից հետո ընկած ժամանակահատվածի մասով: Նույն հարցումով Հանձնաժողովը խնդրել է տրամադրել նաև տեղեկություն ընկերության բաժնետեր (10 տոկոսի բաժնեմասնակցությամբ) և իրական շահառու Կարեն Սարգսյանի՝ 2021 թվականից հետո ընկած ժամանակահատվածում ընկերության ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների գործունեությանը մասնակցության վերաբերյալ:

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթում քննարկվող առերևույթ խախտումների վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 12-ին Կարեն Սարգսյանի կողմից ներկայացվել է պարզաբանում հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 04.08.2025 թվականի թիվ 08/2025-Ա/Վ որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարի խորհրդական Կարեն Սարգսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարույթ:

Վերոգրյալի հիման վրա ցանկանում եմ հայտնել, որ «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ն ստեղծվել էր ամենաժամանակակից կոգեներացիոն ցիկլով ջերմային և էլեկտրական էներգիա արտադրելու նպատակով, Ավանի կաթսայատան հիման վրա: 2021 թվականից մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածում ընկերությունը չի իրականացրել որևէ արտադրական գործունեություն, կայանը չի շահագործվել և չի մատակարարել սպառողներին ջերմային և էլեկտրական էներերգիա, ավելին՝ ինչպես բխում է սույն դիրքորոշմանը կից ներկայացված տեղեկանքից՝ «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կողմից ինձ որևէ շահաբաժին չի վճարվել, ուստի նշված հանգամանքն իմ մոտ համոզմունք է ձևավորել, որ նշված ընկերությունը չի գործում: Բացի այդ, նշված ընկերությունն իմ համար չի ներկայացրել որևէ կարևորություն, անգամ պատրաստակամություն եմ հայտնում ընկերությունում իմ բաժնեմասը նվեր տալ Հայաստանի Հանրապետությանը:

Վերոգրյալը հիմք ընդունելով և նկատի ունենալով, որ տեղյակ չեմ եղել այն օրենսդրական կարգավորման մասին, որ պաշտոնը ստանձնելուց հետո անհրաժեշտ է ընկերության մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման, միաժամանակ, ինձ մոտ համոզմունք է եղել, որ «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ն չի գործում, ուստի այդ պատճառով «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի իմ մասնակցությունը չի հանձնվել հավատարմագրային կառավարման:

Անդրադառնալով «ԷԼ-ԿԱՍ» ՍՊԸ-ի իմ մասնակցությունը պաշտոնը ստանձնելուց հետո շուրջ 5 ամիս անց հավատարմագրային կառավարմանը հանձնելուն, ապա ինչպես արդեն նշել եմ՝ տեղյակ չեմ եղել այն օրենսդրական կարգավորման մասին, որ պաշտոնը ստանձնելուց հետո անհրաժեշտ է ընկերության մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման, ուստի նշված օրենսդրական կարգավորման վերաբերյալ ծանուցումից հետո ողջամիտ ժամկետում այն հանձնվել է հավատարմագրային կառավարման:»:

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի գործունեությանն առնչվող տեղեկություններ

2021 թվականի ապրիլի 28-ից մինչ օրս Կարեն Սարգսյանն զբաղեցնում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդականի պաշտոնը:

4. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. Կարեն Սարգսյան 2021 թվականի ապրիլի 28-ից ստանձնել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդականի պաշտոնը և մինչ օրս շարունակում է պաշտոնավարել:

Կարեն Սարգսյանը 2008 թվականի հունիսի 3-ից հանդիսացել է «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերության մասնակից՝ ընկերության բաժնեմասի 33.4 տոկոսի չափով, որը 2024 թվականի փետրվարի 28-ին օտարվել է:

3. 2021 թվականի սեպտեմբերի 25-ից Կարեն Սարգսյանը «ԷԼ ԿԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ունեցած իր բաժնեմասնակցությունը հինգ տարի ժամկետով հանձնել է հավատարմագրային կառավարման:

4. Կարեն Սարգսյանը «ԷԼ ԿԱՍ» ՍՊԸ-ից ստացել է շահաբաժին՝ 2022 թվականին՝ 1,730,979 դրամ, իսկ 2024 թվականին՝ 9,421,308 դրամ: 2021 և 2023 թվականների շահաբաժին չի ստացել: ՊԵԿ տվյալների համաձայն՝ 2021-2024 թվականների ընթացքում Ընկերությունն ապահովել է իրացման շրջանառություն:

5. 2006 թվականի օգոստոսի 23-ից մինչև օրս Կարեն Սարգսյանն ունի 10% բաժնեմաս «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունում, ինչպես նաև հանդիսանում է ընկերության իրական շահառուն:

6. Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 01/4088-2025 գրությանն ի պատասխան՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից 2025 թվականի հոկտեմբերի 31-ի գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝

1) «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունը 2025 թվականի հոկտեմբերի 31-ի (հարցման պատասխանի ստացման) դրությամբ հանդիսանում է գործող առևտրային կազմակերպություն: ՊԵԿ տվյալների համաձայն՝ 2021-2025 թվականների ընթացքում Ընկերությունն ապահովել է իրացման շրջանառություն,

2) Պետական եկամուտների տվյալների համաձայն՝ Կարեն Սարգսյանը 2021 թվականի ապրիլի 28-ից մինչև մինչ օրս «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունից եկամուտ չի ստացել:

7. Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 01/4224-2025 գրությանն ի պատասխան «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունն իրացման շրջանառություն է ունեցել բնակիչների համար կառուցված ներբնակարանային ցանցի դիմաց ստացված եկամուտներից, որը յուրաքանչյուր ամիս հաշվարկվել է ընկերության կողմից՝ համաձայն բնակիչների հետ կնքված անհատական պայմանագրերի: Միաժամանակ «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ընկերության բաժնետեր Կարեն Սարգսյանը 2021 թվականից հետո ընկած ժամանակահատվածում հանդիսացել է «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության տնօրենների խորհրդի անդամ:

8. «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության կողմից 2025 թվականի հոկտեմբերի 31-ին Հանձնաժողով ներկայացված ընկերության տնօրենների խորհրդի նիստերի 2021-2025 թվականների արձանագրությունների համաձայն՝ Կարեն Սարգսյանը մասնակցել է տնօրենների խորհրդի նիստերին՝ հեռակա քվեարկությամբ:

5. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և **հայեցողական**:

2. Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական հայեցողական պաշտոն է նաև նախարարի խորհրդականի պաշտոնը:

3. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել ***իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ***

մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

4. Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում ***նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝*** **մեկ ամսվա ընթացքում,** պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

5. Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանվում են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները:

6. Նույն օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) **առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.**

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

7. Նույն օրենքի իմաստով **ձեռնարկատիրական գործունեություն է** համարվում՝ (...) **առևտրային կազմակերպության մասնակից,** բաժնետեր, փայատեր լինելը, **բացառությամբ այն դեպքի,** երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ **հանձնվել են հավատարմագրային կառավարման,** կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:

8. Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ): Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն

(բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ **մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:**

9. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ **պետական պաշտոն զբաղեցնող անձանց**, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը:**

10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը **պետական պաշտոն զբաղեցնող անձանց**, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների**, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ:

11. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

6. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու սահմանափակումն ամրագրված է «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Անհամատեղելիության պահանջներ սահմանող իրավակարգավորումներից հետևում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող օրենսդրական պահանջներն ընդգրկում են տարբեր բաղադրիչներ, այն է՝ իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում զբաղեցնելու, **ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, այլ** վճարովի աշխատանք կատարելու արգելքները, որոնցից յուրաքանչյուրին առնչվող իրավակարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի առանձին դրույթներում:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի ներքո սահմանված օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկվում, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն օրենքով սահմանված ժամկետում և կարգով ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման: Նման իրավակարգավորումից հետևում է, որ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում

առևտրային կազմակերպության մասնակցությունը թույլատրելի է բացառապես այն դեպքում, երբ մասնակցի բաժնեմասն Օրենքով սահմանված կարգով հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, մասնավորապես, չի արգելում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց որպես սեփականություն ունենալ բաժնեմաս առևտրային կազմակերպությունում, բացառությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի (2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ մտած ՀՕ 540-Ն օրենք) 31-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերի, որով մասնավորապես սահմանվում է, որ.

- հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

- առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնն ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցության (պաշտոն զբաղեցնելու) արգելքի ներքո ենթադրվում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի գործողություններից, որոնց շրջանակում ձևավորվող վարքագիծը կարող է դիտվել որպես պետական պաշտոնին զուգահեռ՝ անձի կողմից առևտրային կազմակերպության գործունեության նկատմամբ ազդեցության պահպանում՝ մասնակցություն ունենալով կամ այլ կերպ ներգրավված լինելով առևտրային կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

Միաժամանակ, նշված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանափակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սեփականության իրավունքով արդեն իսկ իրենց պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, այլ

տվյալ պաշտոնը զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված՝ նախատեսում է օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն համարվող առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցության տնօրինման կոնկրետ եղանակ, այն է՝ պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ **մեկ ամսվա ընթացքում** առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն (բաժնետոմս, փայ) ***ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման***՝ դրանով իսկ ապահովելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումը, ինչպես նաև բացառելով կամ նվազագույնի հասցնելով վերջինիս մոտ շահերի բախման իրավիճակները: Նման կարգավորումներն որևէ կերպ չեն խաթարում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության հիմնարար իրավունքը, քանի որ անձը, հանձնելով առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման, չի փոխանցում իր սեփականության իրավունքը հավատարմագրային կառավարչին, այլ այդ կերպ իրացնում է իր՝ սեփականատիրոջ իրավունքը:

Իրավական սահմանափակումների ներքո ենթադրվում է, որ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավորվում է գործունեություն իրականացնել իր պաշտոնի նկատմամբ սահմանված իրավական որոշակի սահմանափակումների շրջանակներում: Հետևաբար, նշանակվելով հանրային պաշտոնում՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ պաշտոնատար անձն ստանձնում է նաև օրենքով սպառիչ կերպով սահմանված սահմանափակումների ներքո գործելու պարտականություն, որը հետապնդում է տվյալ պարագայում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բացառապես իր պաշտոնեական լիազորությունների և գործառույթների իրականացումն ապահովելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց մուտքը պետական մարմիններ բացառելու օրինաչափ նպատակը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջների նպատակը շահերի բախման հնարավոր իրավիճակների բացառումն է, ինչպես նաև հանրային պաշտոն

զբաղեցնող անձանց կողմից իրենց աշխատաժամանակի, որպես հանրային ռեսուրսի, պատշաճ տնօրինման ապահովումն է:

Քննարկվող դեպքում Հանձնաժողովը կարևոր է համարում անդրադառնալ հաստատված այն փաստական տվյալներին, համաձայն որոնց՝ Կարեն Սարգսյանը, 2021 թվականի ապրիլի 28-ից զբաղեցնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդականի պաշտոնը, միաժամանակ հանդիսանալով «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերության մասնակից՝ ընկերության 33.4 տոկոս բաժնեմասի սեփականատեր, նշված բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնել 2021 թվականի սեպտեմբերի 25-ին՝ Օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ:

Միաժամանակ, 2024 թվականի փետրվարի 28-ին Կարեն Սարգսյանն օտարել է «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերության իր բաժնեմասը: Այսինքն՝ մինչ Հանձնաժողովի կողմից սույն վարույթի հարուցումը, «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերության Կարեն Սարգսյանին պատկանող բաժնեմասն արդեն իսկ օտարված է եղել:

Վերոնշյալ փաստական տվյալների համակցությամբ, թեև Կարեն Սարգսյանի կողմից «ԷԼ ԿԱՍ» ՍՊ ընկերության բաժնեմասն Օրենքով սահմանված ժամկետում չի հանձնվել հավատարմագրային կառավարման, այնուամենայնիվ՝ հաշվի առնելով այն, որ, ըստ վարույթի մասնակցի, իր կողմից Օրենքով նախատեսված անհրաժեշտ գործողությունները կատարվել են օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրազեկվելուց հետո ողջամիտ ժամկետում, ինչպես նաև այն, որ մինչև սույն վարույթի հարուցումը բաժնեմասն արդեն իսկ օտարված է եղել, իսկ խախտման օրվանից անցել է ավելի քան չորս տարի, և վերոթվարկյալ բոլոր պայմանների համադրության արդյունքում տվյալ հանգամանքը կորցրել է իր իրավական նշանակությունը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Կարեն Սարգսյանի կողմից դրսևորված վարքագիծը, թեև ձևական առումով պարունակում է խախտման հատկանիշներ, բայց Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների նպատակային մեկնաբանման տեսանկյունից ունի նվազ նշանակություն:

Միաժամանակ, «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի 10 % բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման չեն հանձնվել, ինչի հետևանքով Կարեն Սարգսյանը պահպանել է ընկերությունում իր կառավարման իրավունքը:

Բացի այդ, Կարեն Սարգսյանը զբաղեցրել է պաշտոն «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունում՝ հանդիսանալով տնօրենների խորհրդի անդամ և հեռակա ձևով մասնակցելով ընկերության խորհրդի նիստերին, ինչն ըստ էության ևս հակասում է օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջներին:

Մասնավորապես, 2025 թվականի հոկտեմբերի 31-ին Հանձնաժողով ներկայացված «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության տնօրենի թիվ 25/33 գրության համաձայն՝ ընկերությունը հիմնադրվել է իրականացնելու Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ներդրումային ծրագիրը՝ կոգեներացիոն սարքավորումների օգտագործմամբ:

Նույն գրությամբ ներկայացվել է նաև, այն որ Ընկերությունը իրացման շրջանառություն է ունեցել Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բնակիչների համար կառուցված ջեռուցման ներբնակարանային ցանցի դիմաց ստացված եկամուտներից, որը յուրաքանչյուր ամիս հաշվարկվել է «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության կողմից՝ համաձայն բնակիչների հետ կնքված անհատական պայմանագրերի:

Միաժամանակ, նույն գրությամբ ներկայացվել է, որ «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության բաժնետեր (10% բաժնեմասնակցությամբ) և իրական շահառու Կարեն Սարգսյանը 2021 թվականից հետո ընկած ժամանակահատվածում հանդիսացել է «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության տնօրենների խորհդրի անդամ:

2025 թվականի հոկտեմբերի 31-ին «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության տնօրենի թիվ 25/33 գրությանը կից Հանձնաժողով են ներկայացվել նաև 2021-2025 թվականների ընթացքում կայացած ընկերության տնօրենների խորհրդի նիստերի արձանագրությունները, որոնց ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ Կարեն Սարգսյանը 2021-2025 թվականների ընթացքում մասնակցել է ընկերության խորհրդի նիստերին և բաժնետերերի ընդհանուր ժողովներին՝ հեռավար քվեարկությամբ:

Այսպիսով վերոնշյալ փաստական տվյալներից հետևում է, որ «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունը 2021-2025 թվականների ընթացքում հանդիսացել է գործող ընկերություն, ունենալով իրացման շրջանառություն: Միաժամանակ, Կարեն Սարգսյանը, հանդիսանալով ընկերության տնօրենների

խորհրդի անդամ, մասնակցել է խորհրդի նիստերին և բաժնետերերի ընդհանուր ժողովներին՝ հեռավար քվեարկությամբ, այսինքն՝ ունեցել է մասնակցություն նաև ընկերության կառավարմանը:

Հանձնաժողովը կարևոր է համարում անդրադառնալ նաև «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդականի գործունեության ոլորտային կապին:

Տվյալ դեպքում հատկանշական է այն հանգամանքը, որ «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերության գործունեության նպատակն է իրականացնել Երևանի քաղաքի Ավան վարչական շրջանի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգի վերականգնման ներդրումային ծրագիրը՝ կոգեներացիոն սարքավորումների (ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրություն) օգտագործմամբ:

Նշված հանգամանքներից բխում է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդականի կողմից «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի գործունեությանը ներգրավվածությունը կարող է առաջացնել **ոլորտային շահերի բախման ռիսկ**, քանի որ նախարարությունը հանդիսանում է էներգետիկ ենթակառուցվածքների պետական քաղաքականության մշակման, իրականացման և վերահսկողության պատասխանատու մարմին, մինչդեռ նշված ընկերությունը գործում է նույն ոլորտում՝ իրականացնելով պետական նշանակության ներդրումային ծրագիր:

Այս մոտեցումը ապահովում է, որ պաշտոնեական պարտականությունների կատարումը լինի անաչառ, և բացառվում է այն իրավիճակը, երբ անձնական կամ մասնավոր տնտեսական շահերը կարող են հակադրվել պետական կամ հանրային շահերին:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից առևտրային կազմակերպության բաժնետեր լինելը կամ կառավարման մարմնի լիազորություններ ունենալը պաշտոնեական պարտականությունների համատեքստում ստեղծում է շահերի բախման ռիսկ:

Հանրային պաշտոնյայի անմիջական մասնակցությունը ընկերության կառավարման գործընթացներին կարող է ազդել ֆինանսական և վարչական

որոշումների վրա, այդ թվում՝ վճռորոշ ազդեցություն ունենալ եկամուտների բաշխման, ներդրումների կամ այլ ռազմավարական որոշումների ընդունման ժամանակ:

Այս համադրությունը փաստացի հանգեցնում է այն իրավիճակին, երբ պաշտոնեական դիրքը հնարավոր է օգտագործվի առևտրային կամ մասնավոր շահերի սպասարկման համար, ինչը հակասում է օրենքով սահմանված անհամատեղելիության և շահերի բախման կանխարգելման պահանջներին:

Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ անհամատեղելիության ինստիտուտը նախատեսված է պաշտպանելու հանրային պաշտոնը և կանխելու անձնական տնտեսական շահերի ազդեցությունը, և ցանկացած առևտրային կազմակերպության մեջ պաշտոն զբաղեցնելը կամ կառավարման լիազորությունների կիրառումը հանդիսանում է այդ պահանջների խախտում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (…) վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական որևէ հայեցողական լիազորություն՝ իրականացրել որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացրել նույն ձևով:

Հանձնաժողովը հարկ է համարում Կարեն Սարգսյանի կողմից կատարված առերևույթ խախտմանն անդրադառնալ Օրենքի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բովանդակային տեսանկյունից, ուստի նշված արարքն անհրաժեշտ է համարում դիտարկել դրա բովանդակային դրսևորումների շրջանակում՝ գնահատելով սույն գործով ձեռք բերված ապացույցները:

Ընդ որում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև այն իրողությունը, որ իր կողմից նախորդիվ կայացրած եզրակացություններով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու օրենսդրական արգելք սահմանող իրավանորմի պահանջների առնչությամբ արձանագրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բովանդակային խախտումների բացակայություն այն հանգամանքների հաշվառմամբ, որ վարույթի ընթացքում իրավասու մարմիններից

ձեռք բերված տվյալներով հաստատված են համարվել այն փաստական տվյալները, որոնց համաձայն՝ գործող օրենսդրական իրավակարգավորումներին համապատասխան հավատարմագրային կառավարման չհանձնելու պարագայում ընկերությունը փաստացի գործունեություն չի իրականացրել, ինչպես նաև իրացման շրջանառություն և շահույթ չի ստացվել: Մինչդեռ, սույն գործով իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված է համարվում ընկերությունների փաստացի **գործունեություն ծավալելու, ինչպես նաև իրացման շրջանառություն ունենալու հանգամանքը**:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանմանը՝ համաձայն որի «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունը 2021 թվականից մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածում չի իրականացրել որևէ արտադրական գործունեություն, կայանը չի շահագործվել, չի մատակարարել սպառողներին ջերմային և էլեկտրական էներգիա, ինչպես նաև ընկերության կողմից իրեն շահաբաժին չի վճարվել, և այդ հանգամանքներն իր մոտ ձևավորել են համոզմունք, թե ընկերությունը չի գործում, ուստի բաժնեմասը չի հանձնվել հավատարմագրային կառավարման՝ Հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված հիմնավորումները չեն կարող դիտարկվել որպես անհամատեղելիության պահանջների չպահպանման իրավաչափ կամ օբյեկտիվ պատճառաբանություն:

Վարույթի նյութերով հաստատվել է, որ ընկերությունն ունի գործող կարգավիճակ՝ անկախ արտադրական ծավալներից, շահույթ կամ շահաբաժինների բաշխելու հանգամանքից:

Այսինքն՝ «Հայռուսկոգեներացիա» ՓԲ ընկերությունը, որի բաժնեմասը չի հանձնվել հավատարմագրային կառավարման և շարունակել է ունենալ իրացման շրջանառություն և փաստացի իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, վկայում է այն մասին, որ պաշտոնատար անձը պաշտոնավարման ընթացքում փաստացի պահպանել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կարգավիճակը: Նման պարագայում պահպանվում է տնտեսական շահագրգռվածությունը և իրական ազդեցությունն ընկերության գործունեության վրա, ինչն, ըստ էության, հակասում է հանրային ծառայողների համար սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին:

Այսպիսով, արձանագրված փաստական տվյալները հակասում են վարույթի մասնակցի պարզաբանմանը, համաձայն որի վերջինս ենթադրել է, թե ընկերությունը չի գործում, և այդ համոզմամբ չի հանձնել իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը եզրահանգում է, որ սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում Կարեն Սարգսյանն իր գործողություններով չի պահպանել Օրենքի 31-րդ հոդվածով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական Կարեն Բենիամինի Սարգսյանի կողմից խախտվել են հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացվող անհամատեղելիության բովանդակային պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ